ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԲԲԸ
ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԿՈՂՄԻՑ 15.12.2016թ.
Արձանագրություն N 17- 16. ԽՆ

Խորհրդի նախագահ՝
Ատոմ Դավթյան

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԲԲԸ
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերության) գործարար էթիկան դիտարկում է որպես գործարար հարաբերություններում բարոյական արժեքների կիրառման հանձնառության ստանձնում: Ընկերությունը ձգտում է, որ այն իր գործնական արտահայտությունը գտնի ոչ միայն իր որոշումներում և գործողություններում, այլև նրանում, թե այդ որոշումների և գործողությունների միջոցով ինչպիսի մշակույթ է հաղորդում իր շահառուներին:

Ընկերությունը կորպորատիվ վարքականոնները (այսուհետև՝ Վարքականոնները) համարում է իր գործարար էթիկայի հենասյուն և արդյունավետ գործիք շահառուների ու հանրության հետ հարաբերվելու և գործակցելու հարցում: Ընկերության վարքականոններն ավելին են, քան կանոնների պարզ ամբողջություն լինելը: Վարքականոնները գործիք է, որը նպաստում է Ընկերության իրավական համապատասխանությանը, խթանում է բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը և Ընկերության կորպորատիվ հեղինակության ամրապնդմանը:

Ընկերության Վարքականոններում ներկայացված սկզբունքներն ունեն հավասար նշանակություն: Դրանք կողմնորոշում են Ընկերության ղեկավարությանը և աշխատակիցներին՝ իրենց ամենօրյա գործունեության ընթացքում: Ընկերության Վարքականոնները տարածվում են Ընկերության կառավարման բոլոր օղակներում գործող անձանց վրա և հանդիսանում ուղենիշ գործընկերներին ընտրելիս ու նրանց հետ հարաբերություններ կառուցելիս:

Ընկերության ղեկավարությունից և աշխատակիցներից պահանջվում է.

- Ուշադիր ծանոթանալ Վարքականոններին և ընկալել դրա դրույթները, գիտակցել դրան հետևելու անձնական պատասխանատվությունը,
- Հետևել Վարքականոններին՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է ինքը գտնվում՝ Ընկերությունում, թե Ընկերությունից դուրս,
- Ցուցաբերել շրջահայացություն և խուսափել ոչ պատշաճ ու ոչ հարիր վարքագծի դրսևորումից,
- Անմիջական ղեկավարին տեղեկացնել Վարքականոնների իրեն հայտնի դարձած խախտումների (անհամապատասխանությունների) վերաբերյալ,
- Գիտակցել, որ Վարքականոններին չհետևելը լրացուցիչ ռիսկ է իր, իր գործընկերների և Ընկերության համար, և Վարքականոնների պահանջներին հակասող ցանկացած վարքագիծ անթույլատրելի է:

Ընկերությունն ամենայն լրջությամբ է մոտենում Վարքականոններին և համարում է, որ դրան հետևելն իր առաջնահերթ խնդիրներից է:

Ընկերության ղեկավարներից սպասվում է, որ նրանք իրենց վարքագծով օրինակ կծառայեն աշխատակիցների համար: Ղեկավարներից պահանջվում է լավագույն տեղեկացվածություն Վարքականոններից, որպեսզի գործնականում իրենց խորհուրդներով կարողանան դրանց վերաբերյալ իրազեկել աշխատակիցներին և ուղղորդել նրանց:

Ընկերության Վարքականոնների արժեքային հենասյուններն են՝

- **Վստահություն.** Ընկերությունն իր հարաբերությունները կառուցում է ազնվության, փոխադարձ հարգանքի և պատասխանատվության հիման վրա: Ընկերությունը թափանցիկ է, զգուշավոր և հեռատես իր որոշումներում և գործողություններում: Ընկերությունը երկարաժամկետ օգուտները գերադասում է կարճաժամկետներից:
- **Իրավական և էթիկական համապատասխանությունը**. Ընկերությունում կարևորում է հարգանքը իրավական նորմերի նկատմամբ և դրանց պահպանումը: Ընկերությունը բացառում է հակաօրինական ցանկացած գործողություն (ահաբեկչություն, թմրադեղերի, զենքի վաճառք, փողերի լվացում և այլն): Ընկերությունը հետևողական է վարքագծի էթիկական ստանդարտների որդեգրման և դրանց համապատասխանության ապահովման հարցում:

ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղեկավար	Ընկերության խորհրդի անդամ, տնօրեն, վերստուգող հանձնաժողովի անդամ, գլխավոր հաշվապահ, ստորաբաժանման ղեկավար:
Աշխատակից	Անձ, ում հետ Ընկերությունը կնքել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր:
Շահառու	Անձ, ում վրա Ընկերության գործունեությունն ունի էական ազդեցություն, և ում գործողությունները կարող են էականորեն ազդել Ընկերության կողմից իր ռազմավարական նպատակներին հասնելու կարողության վրա (հաճախորդներ, աշխատակիցներ, գործընկերներ, պետական մարմիններ, տեղական համայնք և այլն):
Առևտրային գաղտնիք	Տեղեկատվության գաղտնիության կարգավիճակ (ռեժիմ), որը թույլ է տալիս Ընկերությանը որոշակի կամ հնարավոր հանգամանքների դեպքում ավելացնել շահույթը, կանխել չարդարացված ծախսերը, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայում պահպանել իր դիրքը կամ ստանալ այլ օգուտ (շահ):
Առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվություն	Ընկերության վերաբերյալ ցանկացած բնույթի տեղեկություն (արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական և այլն), այդ թվում՝ մտավոր գործունեության արդյունքներ, մասնագիտական գործունեության իրականացման միջոցներ, որոնք ունեն իրական կամ հնարավոր առևտրային արժեք երրորդ անձանց անհայտ լինելու

	ուժով, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն: Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար, և այն տիրապետողը մտնում է առևտրային գաղտնիքի ռեժիմ:
Ներքին տեղեկություններ	Ունի նույն իմաստը, որը տրված է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում:
Ահազանգում	Ընկերության աշխատակցի կողմից իր անմիջական ղեկավարին կամ Ընկերության ղեկավարության ներկայացուցչին տեղեկության հայտնումն այնպիսի գործողությունների կամ անգործության մասին, որոնք հակասում են կամ սպառնում են հակասել Վարքականոնների դրույթներին:
Շահերի բախում	Իրավիճակ, երբ Ընկերության ղեկավարը/աշխատակիցն ունի անձնական ուղղակի և անուղղակի նյութական շահ, որը հակասում է Ընկերության շահերին և/կամ սահմանափակում է Ընկերության հնարավորություններն իրականացնել իր պարտավորությունները շահառուների նկատմամբ:
Ներքին իրավական ակտ	Ունի նույն իմաստը, որը տրված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում:

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1.1. Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգը միտված է Ընկերության բաժնետերերի իրավունքների պաշտպանությանը և դրանց իրագործմանը:

1.2. Ընկերությունը ժամանակին և կանոնավոր հիմունքներով բաժնետերերին ապահովում է իր գործունեության վերաբերյալ ամբողջական ու էական տեղեկատվությամբ:

1.3. Ընկերությունն իր միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ երաշխավորում է հավասար վերաբերմունք:

1.4. Ընկերությունն ապահովում է իր շահույթից շահութաբաժին ստանալու բաժնետիրոջ իրավունքը՝ համաձայն Ընկերության շահութաբաժնային քաղաքականության:

1.5. Ընկերությունն ապահովում է իր բաժնետերերի արդյունավետ մասնակցությունը խորհրդի անդամների առաջադրման և ընտրության հարցում:

1.6. Ընկերության բաժնետերերը ժամանակին ստանում են ամբողջական տեղեկատվություն ընդհանուր ժողովի հրավիրման օրվա, ամսվա, ժամի, վայրի և օրակարգի ու նրանում ընդգրկված հարցերի հետ առնչվող նյութերի վերաբերյալ:

1.7. Ընկերության ընդհանուր ժողովի հրավիրման տեղն ու ժամը չեն սահմանափակում ընդհանուր ժողովում բաժնետերերի մասնակցությունը:

1.8. Բաժնետերերը հնարավորություն ունեն քվեարկել ինչպես անձնական ներկայությամբ, այնպես էլ հեռակա կարգով: Ընկերության կողմից հավասար նշանակություն է տրվում բաժնետերերի ձայներին՝ անկախ քվեարկության կարգից:

1.9. Բաժնետերերը ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:

1.10. Բաժնետերերը տեղեկացվում են ընդհանուր ժողովների անցկացման ընթացակարգերի, այդ

թվում՝ քվեարկության ընթացակարգերի, վերաբերյալ:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

2.1. Ընկերությունն իր շահառուների հետ հարաբերությունները ձգտում է կառուցել անկեղծության, ազնվության, խոստումների կատարման և թափանցիկության սկզբունքների հիման վրա:

2.2. Ընկերությունը հարգում և հաշվի է առնում իր շահառուների՝ օրենքով կամ պայմանագրերով սահմանված իրավունքներն ու շահերը, ինչպես նաև առաջնորդվում նրանց սպասումներով:

2.3. Ընկերության յուրաքանչյուր շահառու և/կամ նրա ներկայացուցչական մարմին հնարավորություն ունի ազատորեն արտահայտելու իր մտահոգությունն Ընկերության գործունեության վերաբերյալ:

2.4. Ընկերությունը հնարավորություն է տալիս շահառուներին պաշտպանել և արդյունավետ կերպով վերականգնել օրենքով կամ պայմանագրերով սահմանված նրանց իրավունքները:

2.5. Ընկերությունը ժամանակին և կանոնավոր կերպով բացահայտում է շահառուների շահերի հետ առնչվող ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն:

2.6. Ընկերության վարքականոնները աշխատակիցների հետ հարաբերություններում

2.6.1. Ընկերության հաջողությունը պայմանավորվում է նրա աշխատակիցների բարեխիղճ, նպատակասլաց աշխատանքով:

2.6.2. Ընկերությունն առանձնահատուկ ուշադրությամբ է մոտենում աշխատակազմի ձևավորմանն ու զարգացմանը: Ընկերությունը կարևորում է աշխատակիցների պրոֆեսիոնալ և անձնական զարգացումը, աշխատակիցների համար հավասար հնարավորությունների ստեղծումը, յուրաքանչյուրի ներդրման արդարացի գնահատումը, համախոհների թիմի ձևավորումը, կառուցողական և արդյունավետ հաղորդակցումը Ընկերությունում և Ընկերությունից դուրս:

2.6.3. Աշխատակիցների հետ հարաբերություններում Ընկերությունը ձգտում է առաջնորդվել մերիտոկրատիայի սկզբունքով, համաձայն որի Ընկերությունում առաջընթաց ունեն միայն այն անձիք, ովքեր աշխատում են սեփական աճի ու զարգացման վրա, նախաձեռնող են, հակված են նորամուծությունների, հոգ են տանում Ընկերության և սեփական հեղինակության համար:

2.6.4. Ընկերության յուրաքանչյուր աշխատակից հանդիսանում է միասնական թիմի կարևոր անդամ: Ընկերությունը հարգում է բոլոր աշխատակիցների իրավունքներն ու արժանապատվությունը: Ընկերությունը ձգտում է ձևավորել հարգանքի և վստահության, հանդուրժողականության և արդարության վրա հիմնված աշխատանքային միջավայր:

2.6.5. Ընկերության յուրաքանչյուր աշխատակից իրավունք ունի իր նկատմամբ արդարացի, հարգալից վերաբերմունքի: Խտրականություններն ու ոտնձգություններն աշխատակիցների նկատմամբ Ընկերությունում խստիվ արգելվում են:

2.6.6. Ընկերությունը հարգում է իր աշխատակիցների անձնական տվյալների գաղտնիությունը:

2.6.7. Ընկերությունը ձգտում է իր աշխատակիցների համար ապահովել աշխատանքի անվտանգ պայմաններ, ինչպես նաև չենթարկել նրանց անհիմն ռիսկերի: Ընկերությունը գիտակցում է, որ աշխատանքի անվտանգությունը պայմանավորվում է ոչ միայն աշխատատեղի տեխնիկական հագեցվածությամբ, այլև աշխատանքի պաշտպանության և անվտանգության վերաբերյալ աշխատակիցների իրազեկվածությամբ:

2.6.8. Ընկերությունն ակնկալում է, որ աշխատակիցները կհետևեն Ընկերության ընթացակարգերին իրենց և իրենց գործընկերների անվտանգությունն ապահովելու համար: Անմիջական ղեկավարները պարտավոր են ապահովել իրենց աշխատակիցների աշխատանքի անվտանգ պայմաններ, այդ թվում իրազեկել և տեղեկացնել անվտանգության հնարավոր խնդիրների մասին:

2.6.9. Աշխատակիցները միմյանց նկատմամբ պետք է լինեն հարգալից, կիսեն ինչպես հաջողությունների, այնպես էլ անհաջողությունների պատասխանատվությունը:

2.6.10. Ընկերությունը հարգում է աշխատակիցների կարծիքը, քաջալերում է աշխատակիցների կողմից ցուցաբերվող նախաձեռնությունը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ աշխատակիցների

ինքնաիրացման համար:

2.6.11. Ընկերության համար անընդունելի է աշխատակցի հետևյալ վարքագիծը՝

- ✓ Աշխատավայրում ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ գտնվելը.
- ✓ Անփութությունը կամ անվտանգության ապահովման և առողջության պահպանության կանոնների դիտավորությամբ խախտումը.
- ✓ Աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարումը կամ չկատարումը, անփույթ վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ.
- ✓ Ընկերության համար էական տեղեկատվության թաքցնումը կամ խեղաթյուրումը.
- ✓ Ընկերության համար առևտրային գաղտնիք համարվող (ներքին) տեղեկատվության բացահայտումը.
- ✓ Խտրականությունների տարբեր ձևերի դրսևորումը և ոչ հարգալից վերաբերմունքը գործընկերների ու այլ շահառուների նկատմամբ.
- ✓ Ոտնձգությունները Ընկերության և գործընկերների գույքի նկատմամբ,
- ✓ Ընկերության հեղինակությանը վնասի հասցնումը, այդ թվում՝ անփույթ վերաբերմունքը Ընկերության խորհրդանշանների նկատմամբ:

2.7. Ընկերության վարքականոնները հաճախորդների հետ հարաբերություններում

2.7.1. Ընկերությունը գտնում է, որ իր գործունեության հաջողության գրավականը վստահության և փոխադարձ օգուտների վրա հիմնված գործարար հարաբերություններն են: Ղեկավարվելով ազնվության, թափանցիկության և արդարության սկզբունքներով Ընկերությունը փորձում է ըմբռնել իր հաճախորդների սպասումներն ու պահանջմունքները, նվաճել նրանց լոյալությունն ու հարգանքը:

2.7.2. Ընկերությունը մշտապես փնտրում է հաճախորդների հետ համագործակցության նոր եզրեր, նրանց պահանջմունքների ու սպասումների բացահայտման և բավարարման խելամիտ ուղիներ:

2.7.3. Ընկերությունը հավասար վերաբերմունք է կիրառում իր հաճախորդների նկատմամբ՝ անկախ նրանց ֆինանսական և ոչ ֆինանսական հնարավորությունների ու պատվերների ծավալների:

2.8. Ընկերության վարքականոնները մրցակիցների հետ հարաբերություններում

2.8.1. Ընկերության արդյունավետությունը և հաջողությունը պայմանավորվում է մրցակցային միջավայրով: Ընկերությունը խստորեն հետևում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությանը:

2.8.2. Ընկերության համար անընդունելի է ոչ արդար մրցակցության ցանկացած դրսևորում, քանի որ այն ունի հեղինակության ռիսկի ծագման բարձր հավանականություն:

2.8.3. Ընկերությունն իր մրցակիցների հետ հարաբերությունները կառուցում է ազնվության և հարգանքի սկզբունքների վրա ու նրանց դիտարկում որպես Ընկերության զարգացման լրացուցիչ խթան:

2.8.4. Մրցակիցների հետ տարաձայնությունների և վեճերի ծագման դեպքում Ընկերությունը նախապատվությունը տալիս է բանակցությունների միջոցով դրանց լուծմանը:

2.8.5. Ընկերությունը պատրաստ է մրցակիցների հետ քննարկելու մրցակցային դաշտում առկա ընդհանուր խնդիրները և գտնել դրանց փոխշահավետ լուծումներ:

2.9. Ընկերության վարքականոնները գործընկերների հետ հարաբերություններում

2.9.1. Ընկերությունը գործադրում է իր բոլոր ջանքերն ու հնարավորությունները, որպեսզի պահպանի հասարակության հուսալի անդամի և գործընկերոջ իր հեղինակությունը:

2.9.2. Իր գործընկերների հետ հարաբերություններում Ընկերությունը ղեկավարվում է բարեխղճության սկզբունքով, որը ձգտում է տարածել գործընկերների հետ հարաբերվելու բոլոր փուլերի վրա՝ բանակցությունների վարումից, պայմանագրի կնքումից մինչև դրանց իրագործումը:

2.9.3. Ընկերությունը գնահատում է իր գործընկերների ներդրումը իր կողմից ձևավորվող

արժեշղթայում:

2.9.4. Ընկերությունն իր գործընկերներին ընտրելիս ձգտում է խուսափել շահերի բախումից և այլ գործողություններից, որոնք կարող են ազդել ընտրության օբյեկտիվության վրա:

2.9.5. Ընկերությունը չի թաքցնում, չի խեղաթյուրում և չի հրաժարվում պետական մարմինների կողմից հայցվող տեղեկատվությունը տրամադրել, հակված է ակտիվ համագործակցել պետական մարմինների հետ:

2.9.6. Ընկերությունն ընդունում է, որ շրջակա միջավայրի պաշտպանությունը կարգավորող օրենքներին հետևելը իր գործունեության նվազագույն պայմանն է: Ընկերությունը ձգտում է նվազեցնել շրջակա միջավայրի վրա ունեցած իր հնարավոր բացասական ազդեցությունը՝ բնական ռեսուրսների, էներգակիրների պատասխանատու ու խնայողաբար օգտագործման, շրջակա միջավայր արտանետումների և թափոնների քանակի նվազեցման միջոցով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

3.1. Ընկերությունը ընդունում է, որ արժանահավատ, ճշգրիտ և օբյեկտիվ հաշվառումն ու հաշվետվությունները՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական, չափազանց կարևոր են Ընկերության շահառուների վստահությունը շահելու և Ընկերության հեղինակությունն ամրապնդելու, ստանձնած պարտավորությունները կատարելու, բիզնես որոշումները իրագործելու և դրանք վերահսկելու համար:

3.2. Ընկերության ֆինանսական հաշվետվությունը կազմվում են ժամանակին, տեղեկատվության հուսալի ու արժանահավատ աղբյուրների հիման վրա:

3.3. Ընկերության առևտրային գործառնությունների հաշվառումը կատարվում է ամբողջ ծավալով, ճիշտ, ժամանակին, հաստատված ընթացակարգերին համապատասխան և պատշաճորեն արտացոլում են Ընկերության կողմից իրականացված գործարքները:

3.4. Ընկերության հաշվառման փաստաթղթերը, գրանցումները համապատասխանում են հաշվապահական հաշվառման և հաշվետվության պատշաճ վարման սկզբունքներին:

3.5. Ընկերության ակտիվները, այդ թվում՝ ոչ նյութական, Ընկերության երկարաժամկետ կայուն և հուսալի զարգացման հիմքն են: Ընկերությունն իր առջև խնդիր է դրել խթանել Ընկերության ակտիվների ու ռեսուրսների առավելագույն արդյունավետությամբ օգտագործումը: Ընկերությունը հետևում է, որ Ընկերության ակտիվները օգտագործվեն միայն ի շահ Ընկերության՝ արդյունավետորեն, խնայողաբար և միայն աշխատանքային նպատակներով:

3.6. Ընկերության ծախսերի հետ կապված որոշումներն ընդունվում են առաջնորդվելով Ընկերության կորպորատիվ նպատակների իրագործմամբ, բաժնետերերի շահերով, ինչպես նաև Ընկերության բյուջետային սահմանափակումների շրջանակներում: Ընկերության բոլոր ծախսերը վերահսկվում են:

3.7. Ընկերության ֆինանսական կարգապահությունն ու ակտիվների պաշտպանվածությունն երաշխավորելու նպատակով Ընկերությունը ձևավորել է ներքին հսկողության համակարգ, որի նպատակն է ապահովել Ընկերության արդյունավետ և հաջող գործունեությունը, ռիսկերի արդյունավետ կառավարումը, Ընկերության կողմից բացահայտվող տեղեկատվության (ֆինանսական և ոչ ֆինանսական) արժանահավատությունը և Ընկերության գործունեության համապատասխանությունն իրավական ակտերի պահանջներին:

3.8. Ընկերության ներքին հսկողության համակարգի խնդիրներն են՝

- Ընկերության կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործառնությունների նկատմամբ մշտական և պարբերական հսկողության ապահովումը,
- Ընկերության ակտիվների պաշտպանվածության ապահովումը,
- Ընկերության ֆինանսական դրության վերլուծությունն ու գնահատումը,
- Ընկերության գործունեության իրավական համապատասխանության ապահովումը, Ընկերության կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների իրագործելիության խթանումը,
- Ընկերության էական բիզնես-գործընթացներն ուղեկցող ռիսկերի բացահայտումը, գնահատումը, հսկողական, կանխարգելիչ և ուղղիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումն ու դրանց իրականացման նկատմամբ հսկողության

սահմանումը:

3.9. Ներքին հսկողության գործուն համակարգի ապահովման նպատակով Ընկերությունում ձևավորվում են բիզնես-գործընթացների կառավարման ընթացակարգեր, նշանակվում են պատասխանատուներ, պարբերաբար դիտարկվում է դրանց արդիականությունը, համարժեքությունը և համապատասխանությունը Ընկերության աճի տեմպերին, տարեկան կտրվածքով գնահատվում է ռիսկերի կառավարման, հսկողական համակարգերի, ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների պլանի իրագործման արդյունավետությունը:

4. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

4.1. Ընկերությունը ճանաչում և հարգում է իր շահառուների նպատակների և շահերի բազմազանությունն ու կարևորությունը, սակայն Ընկերությունը չի կարող անտարբեր մնալ այնպիսի իրավիճակներում, երբ անձնական, ընտանեկան և այլ հանգամանքների արդյունքում Ընկերության ղեկավարը կամ աշխատակիցը կորցնում կամ կարող է կորցնել իր լոյալությունը Ընկերության նկատմամբ:

4.2. Ընկերությունում բիզնես և անձնական շահերը խստորեն տարանջատվում են: Ընկերությունում անձնական դիրքը չպետք է անօրինական ձևով օգտագործվի առանձին անձանց կողմից օգուտներ կորզելու նպատակով: Անձնական շահից ելնելով որևէ գործընկերոջ նախապատվություն տալն արգելվում է:

4.3. Ընկերությունում քաջալերվում է շահերի բախումների բացահայտումը և հետևյալ սկզբունքների կիրառումը.

- գործնական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս առաջնորդվել միայն Ընկերության շահով.
- Ընկերության ակտիվները, ռեսուրսները, առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը չօգտագործվել անձնական, ինչպես նաև երրորդ անձանց համար ֆինանսական կամ ոչ ֆինանսական օգուտներ ապահովելու նպատակով.
- շահառուների հետ հարաբերություններում խուսափել Ընկերության շահերին հակասող անձնական հետաքրքրությունների դրսևորումից.
- գույքային կամ ֆինանսական հետաքրքրվածություն չունենալ Ընկերության մրցակից և/կամ գործընկեր հանդիսացող կազմակերպություններում.
- ձեռնպահ մնալ Ընկերությունում իր ընտանիքի անդամի (ների) ծառայողական առաջընթացը խրախուսելուց.
- խուսափել գործողություններից, որոնք կարող են հանգեցնել Ընկերության շահերից չբխող որոշումների կայացման (նվերների, դրամային և այլ տեսքով պարգևների և այլ օգուտների ընդունում).
- ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք բացասաբար են ազդում աշխատանքային և Ընկերության նկատմամբ ստանձնած պարտականությունների կատարման վրա.
- առանց Ընկերության իրավասու անձի գրավոր թույլտվության՝ վճարովի ծառայություններ չմատուցել գործընկերներին և/կամ մրցակիցներին.
- շահերի բախման ռիսկի ծագման մասին ողջամիտ ժամկետներում ահազանգել իր անմիջական ղեկավարին կամ Ընկերության ղեկավարության ներկայացուցչի:

5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

5.1. Ընկերությունն ապահովում է բոլոր այն էական հարցերի ժամանակին և ճշգրիտ բացահայտումը, որոնք վերաբերում են Ընկերությանը, ներառյալ Ընկերության ֆինանսական վիճակին, գործունեության արդյունքներին, սեփականության կառուցվածքին և կառավարման համակարգին:

5.2. Ընկերությունում անց է կացվում տարեկան աուդիտորական ստուգում անկախ, իրազեկ և բարձր որակավորում ունեցող արտաքին աուդիտորի միջոցով, որպեսզի բաժնետերերին և այլ շահառուների տրամադրվի արտաքին և օբյեկտիվ ապացույց առ այն, որ Ընկերության

ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն և էականորեն արտացոլում են Ընկերության ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները:

5.3. Ընկերության տեղեկատվության տարածման կապուղիները ապահովում են համապատասխան տեղեկատվության հավասար, ժամանակին և ոչ ծախսատար հասանելիությունը բոլոր օգտագործողների համար:

5.4. Ընկերության ինտերնետային էջը դիտարկվում է որպես ներկա և հնարավոր բաժնետերերի ու շահառուների հետ հաղորդակցման առաջնահերթ միջոց:

5.5. Ընկերության ինտերնետային էջում հրապարակվող տեղեկատվությունը մշտապես թարմացվում է՝ ապահովելով Ընկերության և նրա գործունեության մասին այժմեական տեղեկատվության հասանելիություն:

5.6. Ընկերությունը ժամանակին և կանոնավոր հիմունքներով բացահայտում է հետևյալ տեղեկատվությունը.

- Խորհրդի կառուցվածքը, խորհրդի և գործադիր մարմնի ղեկավարի կենսագրական տվյալները,
- սեփականության կառուցվածքը (նշանակալից բաժնետերերի մասին տեղեկատվությունը՝ նրանց անունը (անվանումը), Ընկերությունում ունեցած մասնակցության չափը),
- կորպորատիվ և կազմակերպական կառուցվածքը (հոլդինգներում մասնակցությունը, դուստր և կախյալ ընկերությունների առկայությունը, Ընկերության կազմակերպական ընդհանուր կառուցվածքը),
- կորպորատիվ վարքականոնները,
- Ընկերության տարեկան և ֆինանսական հաշվետվությունները՝ կից մեկնաբանություններով և արտաքին աուդիտի եզրակացությամբ,
- Ընկերության վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն՝ Ընկերության պատմությունն ու գործունեությունը, պետական գրանցման փաստաթղթերը,
- Ընկերության կանոնադրությունը,
- ցանկացած այլ տեղեկատվություն, որի բացահայտումը Ընկերությունը գտնում է նպատակահարմար՝ Ընկերության բաժնետերերի և այլ շահառուների շահերի պաշտպանվածության տեսանկյունից:

5.7. Ընկերությունն իր թափանցիկությունը հավասարակշռում է իր առևտրային շահերով՝ սահմանելով առևտրային գաղտնիքի ռեժիմը, այդ թվում՝ որոշում առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության ցանկը, դրա հասանելիության կարգը և պայմանները, իր աշխատակիցներից և շահառուներից պահանջում գաղտնիության ռեժիմի պահպանում, օրենքով սահմանված կարգով պաշտպանում իր իրավունքները առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը երրորդ անձանց կողմից ապօրինի եղանակներով ստանալու, օգտագործելու դեպքում:

5.8. Ընկերությունը առևտրային գաղտնիք է համարվում հետևյալ տեղեկությունները՝

- Ընկերության զարգացման ծրագրերը, գործարար նպատակներն ու պլանները,
- Ընկերության ներքին տեղեկությունները,
- Ընկերությունում նախատեսվող և փաստացի ներդրումների ծավալները,
- Ընկերության համար որոշակի աշխատանք կատարողների, ծառայություններ մատուցողների ցանկը,
- Ընկերության աշխատակիցների անձնական տվյալները և աշխատավարձի մեծությունը,
- Ընկերության գործընկերների հետ բանակցությունների անցկացման նախապատրաստումը և դրանց արդյունքները,
- Ընկերության պայմանագրերով, համաձայնագրերով և այլ պարտավորություններով պայմանավորված տեղեկությունները,
- Ընկերության կողմից օգտագործվող և մշակվող տեխնոլոգիաների ու դրանց կիրառման առանձնահատկությունները, մտավոր գործունեության արդյունքները, մասնագիտական գործունեության իրականացման միջոցները,

- Ընկերության անվտանգության կարգը, վիճակը, անցագրային, ազդանշանային համակարգը,
- Ընկերության բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայությունը և շարժը, դրանցով կատարվող որևէ գործողություն,
- Ընկերության և այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերի պահպանման և օգտագործման կարգը, ինչպես նաև դրանց բնօրինակների, պատճենների, տեքստերի գտնվելու տեղը, դրանց հասանելիությունը, այդ թվում՝ Ընկերության էլեկտրոնային (համակարգչային) տվյալների բազայում,
- Ընկերության սեփականությունը հանդիսացող կամ այլ հիմքերով (վարձակալության, հավատարմագրային կառավարման, առևտրային կամ տեխնիկական շահագործման, ժամանակավոր օգտագործման և այլն) Ընկերությանը պատկանող, կամ այլ կազմակերպության կողմից Ընկերությանը վարձակալության/ենթավարձակալության, ժամանակավոր օգտագործման, հավատարմագրային կառավարման, տեխնիկական շահագործման և այլ հիմքերով հանձնած անշարժ, շարժական գույքի վերաբերյալ տվյալները,
- Ընկերության կողմից տարվող բոլոր բանակցությունները, ողջ գործնական գրագրությունը՝ ուղղված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, վարձակալության, գույքի օգտագործման, դրամական և այլ նյութական միջոցների տեսքով ներդրումների ներգրավման, համատեղ ձեռնարկությունների ստեղծման, գույքի գրավի, ֆինանսական օգնության տրամադրման, դրամական միջոցների փոխանակման, վարկերի փակման, գրավի վերադարձի, վարկերի տոկոսների վճարման և այլ պայմանագրերի կնքմանը,
- Ընկերության դրամական միջոցների էլեկտրոնային փոխանցման կոդերը, բանկային կոդերը, համակարգչային ծածկագրերը,
- Ցանկացած այլ տեղեկատվություն, եթե բացակայում է տեղեկատվությունը դրա բացահայտման վերաբերյալ:

5.9. Ընկերությունը համարում է առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության ստացումն օրինական, եթե այն ստացվել է Ընկերությունից պայմանագրի հիման վրա կամ այլ օրինական հիմքով:

5.10. Ընկերությունը համարում է առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության ստացումը անօրինական, եթե այն ստացվել է դիտավորյալ շրջանցելով Ընկերության կողմից ընդունված առևտրային գաղտնիքի պահպանության միջոցները, ինչպես նաև եթե այդ տեղեկատվությունը ստացած անձը գիտեր կամ պարտավոր էր իմանալ, որ նշված տեղեկատվությունը համարվում է Ընկերության առևտրային գաղտնիք, և այդ տեղեկատվությունը տարածողը չունի այն տարածելու օրինական հիմքեր:

5.11. Ընկերությունը հանդիսանում է աշխատողի կողմից աշխատանքային հարաբերությունների շրջանակներում ստեղծված առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության իրավատերը:

5.12. Ընկերության տնօրենի գրավոր թույլտվությամբ Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության փոխանցումը երրորդ անձանց հնարավոր է նրանց՝ Ընկերության հետ համագործակցության ներգրավման դեպքում, որի համար պահանջվում է իմանալ այդպիսի տեղեկատվություն, և միայն այն ծավալով, որն անհրաժեշտ է կոնկրետ նախագծի նպատակների և խնդիրների իրականացման համար, և միայն նշված անձանց կողմից ստացված տեղեկությունները չբացահայտելու պարտավորության գրավոր ձևով ընդունման պայմանով:

5.13. Ընկերության կողմից ցանկացած համատեղ տնտեսական, ֆինանսական և այլ գործունեության վերաբերյալ պայմանագիր կնքելիս պայմանագրի տեքստում նշվում են գաղտնի տեղեկատվության պահպանության մասին դրույթներ:

5.14. Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը կարող է ներկայացվել միայն դատարանի, իրավապահպան, պետական կարգավորող մարմինների հիմնավորված պահանջով՝ ՀՀ օրենսդրության հիման վրա:

5.15. Տեղեկատվության գաղտնիության պահպանության համար Ընկերությունն իր ղեկավարներին և աշխատակիցներին հորդորում է՝

- իրականացնել Ընկերության կողմից հաստատված առևտրային գաղտնիքի ռեժիմը, չբացահայտել Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը բանավոր կամ գրավոր, ցանկացած միջոցով, չքննարկել առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը ընկերների և հարազատների հետ, զրույցներ չվարել դրա մասին հասարակական վայրերում, պաշտպանել առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը դրա ձևավորման, մշակման, օգտագործման, փոխանցման և պահպանման ընթացքում,
- խելամիտ զգուշավորություն ցուցաբերել իրեն հասանելի ցանկացած տեղեկատվության նկատմամբ,
- տեղեկատվության փոխանակումն Ընկերությունում իրականացնել միայն ծառայողական նպատակներով,
- երրորդ կողմին առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը տրամադրելիս՝ համոզվել տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու նրա պարտավորության մասին, ինչպես նաև տեղեկատվության չարտոնված հասանելիության կասկածների դեպքում այդ մասին ահազանգել անմիջական ղեկավարին կամ Ընկերության ղեկավարության ներկայացուցչին,
- հատուցել Ընկերությանը պատճառված վնասը, եթե մեղավոր է առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության բացահայտման մեջ, որն իրեն հայտնի է դարձել իր աշխատանքային պարտականությունների կատարելիս,
- աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում Ընկերությանը հանձնել իր օգտագործման տակ գտնվող առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվություն պարունակող նյութական կրիչները,
- Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը չտեղադրել այնպիսի փաստաթղթերում, որոնք նախատեսված են հանրային օգտագործման համար կամ որոնք գտնվում են երրորդ անձանց հասանելի տեղերում,
- բանակցությունների վարման ընթացքում Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությունը չհայտնել ցանկացած երրորդ անձի նախքան նրա հետ պայմանագրի՝ գաղտնի տեղեկատվության չբացահայտման պայմանով, կնքումը,
- ձեռնպահ մնալ Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը աշխատանքային սեղանի վրա կամ երրորդ անձանց հասանելի տեղերում պահելուց,
- աշխատանքային օրվա ավարտից հետո աշխատանքային սեղանից հավաքել Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվություն պարունակող բոլոր փաստաթղթերը,
- իր անմիջական ղեկավարի կամ Ընկերության ղեկավարության այլ ներկայացուցչի առաջին իսկ պահանջի դեպքում ներկայացնել իր տրամադրության տակ գտնվող Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվություն պարունակող նյութերը, ներկայացնել բանավոր կամ գրավոր բացատրություններ Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության բացահայտման, այդ տեղեկությունները պարունակող փաստաթղթերի կորստի վերաբերյալ,
- երրորդ անձանց կամ կազմակերպությունների կողմից Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվություն ստանալու փորձերի դեպքում այդ մասին անհապաղ ահազանգել իր անմիջական ղեկավարին կամ Ընկերության ղեկավարության այլ ներկայացուցչի,
- աշխատանքից ազատման, արձակուրդ գնալուց, երկարատև (ավելի քան մեկ շաբաթ) գործուղման մեկնելուց առաջ իր անմիջական ղեկավարին հանձնել Ընկերության առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության բոլոր կրիչները, ինչպես նաև աշխատանքային պարտականությունները կատարելու համար իր տրամադրության տակ գտնվող բանալիները և այլն:

5.16. Ընկերության աշխատակիցներին արգելվում է տալ բանավոր և գրավոր մեկնաբանություններ, ինչպես նաև տեղեկատվություն հաղորդել զանգվածային լրատվության միջոցներին և այլ

անձանց Ընկերության գործունեության հետ կապված ցանկացած հարցի շուրջ, այդ թվում՝ առևտրային գաղտնիքի պահպանության հետ չկապված: Ընկերության աշխատակիցների շփումը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ թույլատրվում է միայն Ընկերության տնօրենի գրավոր համաձայնությամբ և նրա հետ համաձայնեցված ծավալով:

5.17. Ընկերությունն իրավունք ունի աշխատակցի հետ դադարեցրել է աշխատանքային հարաբերությունները, եթե նա մեղավոր է առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվության բացահայտման մեջ: Ընկերությունն իրավունք ունի այդ անձից պահանջել նաև վնասի լրիվ հատուցում, այդ թվում՝ բաց թողնված օգուտի ստացում:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Վարքականոնները, դրանցում փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև դրանց նոր խմբագրությամբ հաստատումը կատարվում է և ուժի մեջ մտնելը սահմանվում է Ընկերության խորհրդի կողմից:

6.2. Վարքականոնները ներքին իրավական ակտ է և ընդունվում են համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի:

6.3. Ընկերությունը բացասաբար է գնահատում ցանկացած գործողություն, որը ոչ միայն խախտում է, այլև կարող է նպաստել Վարքականոնների խախտմանը և/կամ խախտումների թաքցմանը:

6.4. Ընկերությունը պարբերաբար դիտարկում է Վարքականոնների խախտման դեպքերը, քննարկում դրանց ծագման պատճառները և որոշումներ կայացնում դրանք վերացնելու ուղղությամբ:

6.5. Ընկերության աշխատակիցների կողմից Վարքականոնների խախտումը և/կամ խախտումների թաքցնումը որակվում է որպես աշխատանքային կարգապահության խախտում:

6.6. Ընկերությունը ուսումնասիրում է Վարքականոնների խախտման յուրաքանչյուր առանձին դեպք և ապահովում խախտման հետևանքի ու կիրառվող միջոցի համարժեքությունը:

6.7. Ընկերության բոլոր աշխատակիցները պարտավոր են ծանոթանալ և հետևել Վարքականոններին: Ընկերությունն ապահովում է Վարքականոնների հասանելիությունը աշխատակիցների համար՝ ստորագրությամբ ծանոթացման միջոցով (Հավելված 1): Եթե ինչ-ինչ պատճառներով աշխատակիցը չի ծանոթացել Վարքականոնների դրույթներին կամ չի ստորագրել ծանոթացման մասին, նա չի ազատվում Վարքականոններին հետևելու պատասխանատվությունից:

6.8. Եթե Ընկերության աշխատակիցը Վարքականոնների հետ կապված ունի հարցեր, նկատառումներ, առաջարկություններ, դրանք նա կարող է քննարկել անմիջական ղեկավարի կամ Ընկերության ղեկավարության այլ ներկայացուցչի հետ:

6.9. Ընկերության Վարքականոններին չհետևելը կարող է հանգեցնել պատժամիջոցների կիրառման՝ ընդհուպ մինչև աշխատանքային հարաբերությունների դադարեցմանը: Վարքականոնների դրույթների խախտումը կարող է որակվել նաև որպես իրավական խախտում և հանգեցնել քաղաքացիա-իրավական կամ քրեական պատասխանատվության:

Հավելված 1

ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____

հավաստում եմ, որ ծանոթացել եմ **«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» բաց բաժնետիրական ընկերության** կորպորատիվ վարքականոններին և լիարժեքորեն ըմբռնում եմ դրա դրույթներին հետևելու իմ պարտականությունը:

Աշխատակցի անուն, ազգանուն_____

ստորագրություն_____

օր/ամիս/տարեթիվ_____